

ԹՈՌԱՆ ՊԱՏԿԱՌԱՆՔՈՎ

Վերջերս Ձանգեզուրում պատահեցի մի մարդու: Մի քանի մամուռ մաշած, գրեթե ջնջուած քայլոզ մի մատուռ: Հարցրի տարիքը: Հարիւրերեք էր:

— Յովհաննէս Թումանեանից էլ մեծ ես, ասացի:

— Մեծ եմ, բայց նա յաւիտենութիւնից է գալիս: Նա իր ապրած ժամանակ էլ ինձ բուռ էր թէ իմ պապն է: Աչքս բաց եմ արել «Մի կաթիլ մեղր»ը բերանումս, «Շունն ու կատուն» աչքիս տուաջ, «Հին օրհնութիւն»ը ականջիս մէջ: Երիտասարդ չեղաւ, բայց երիտասարդ ... լեզուս չի բռնում ասեմ ... շողքն ու շունչը կայ ... խօսքն ու խրատը կայ, խելքն ու խորհուրդը կայ, բոյրն ու բուրմուռքը կայ, ցանն ու ցնորքը կայ, բայց ինքը ... չկայ: Այսինքն կայ, բայց իր լինելը չի գգում:

— Իսկ դուք իրեն տեսե՞լ էք, — հարցնում եմ: — «Էն գիլ ձէներն են միմակ իմ ականջում մնացել...»:

Մարդ—մատուռը մնաց իր յուշերի հետ, իսկ ես ընկայ իմ մտքերի ետեւից:

Ու միտք եմ անում. եթէ մի հրաշքով Թումանեանը բարձրանար գերեզմանից, մենք հասակակիցներ կը լինէինք: Եւ դարձեալ նա իմ պապը կը լինէր: Ես նրա հետ կը խօսէի թոռան պատկանաւորով, նա ինձ հետ՝ պապի իրաւունքով: Պետրոս Դուրեանը տասնութ տարով մեծ էր, բայց նրա էլ պապն էր: Հանդիպէր Արուսեանին, հաչատուր պիտի ասէր: Սայաթ—Նովային պիտի ասէր Արուսեան, Գուշակին՝ Նահապետ եւ Նարեկացուն՝ Գրիգոր: Ինչո՞ւ է մեզ այդպէս բուռն: Ինչո՞ւ է այդպէս...: Այդպէս է բուռն եւ այդպէս է, որովհետեւ անտէր տան տղաները մանկութիւն չեն ունենում, երիտասարդ չեն լինում, շուտ են այրանում:

Յովհաննէս Թումանեանը ծնուեց անտէր—անտիրական մի Հայաստան աշխարհում, իր նախնեաց աւերակների վրայ:

Ոտքը հոգին դրեց թէ չէ, նա իր ուսերին առաւ այդ աւերակների վրայ ապրող գարկուած ու գրկուած Հայ ժողովրդի հոգսերը: Եւ որպէսզի հոգար ժողովրդի կարիքները, ապրելու, ամբողջանալու, գոյատեւելու ոգի տար նրան, հարկաւոր էր ճանաչել նրան, իմանալ նրա ծագումը, կենսագրութիւնը, նրա բնութիւնը, տիպը, հոգին, առաքիճութիւններն ու ակնկալութիւնները, նրա տեղն ու կշիռը ժողովուրդների պատմութեան մէջ: Եւ նա գնաց. գնաց քափառելու «հին ժամանակների յուշերի ու մշակութիւնների մէջ, անցած—գնացած առեղծուածային աշխարհիքներում, հեռացած—մոռացուած աստուածների հետ»:

Յետոյ ետ գալիս, նախապարհին տեսաւ իր ժողովրդի արած մեծամեծ գործերը, մեծամեծ փառութիւնները, տեսաւ նրա թռիչքներն ու անկումները, տեսաւ նրա օրհասական կռիւները Ասորեստանի, Պարսկաստանի, Յունաստանի, Բիւզանդիոնի դէմ, տեսաւ Թուրք-Թաքար, Մոնկոլ ցեղերի ասպատակութիւններն ու առեւանգումները: Տեսաւ, հըպարտացաւ, գայրացաւ, յուսալուեց, ինքնիրեն յուսադրեց, հասաւ Լոռի, այնտեղ, որտեղից գնացել էր եւ որտեղ ծնուել էր ու մեծացել: Լոռում նստեց, մտքերն ի մի բերեց: Տեսաւ որ օտարների ոտի կոխան իր ժողովուրդը դառնացել է, փոխել է իր տիպը, հոգին, լեզուն, բնութիւնը, բայց կառուցելու իր կորովը, որ իր տոհմիկ յատկութիւնն էր, պահել է...: Եւ սկսեց իր մեծ արուեստի շինարարութիւնը: Շինեց մի նոր անկրկնելի Լոռի-Հայաստան: Եւ այդ Լոռի-Հայաստանը աշխարհի մեծ արուեստի դոգիերից ներս տարաւ: Պուշկինով հարստացաւ, լցուեց Շէյխ-փիրով եւ դարձաւ Հայոց Շէյխփիրը: Եւ ինչպէս Գարլայլը Շէյխփիրի մասին է ասել, մենք էլ մեր Թումանեանի մասին ենք ասում. «Այլեւ ոչ մի հայկական թագաւոր չի կարող էդ ցեղի վրայ տարածել իր իշխանութիւնը եւ իր գայիսոնի տակ պահպանել նրա ազգային միութիւնը: Եւ միմիայն մի թագաւոր կայ, որ կարող է ու կարողանում է տիրել համատարած հայկական ցեղին ամէն տեղ, ու պահպանել նրա ազգային միութիւնը, որտեղ էլ նրանք լինեն, - դա Թումանեանն է»:

Թումանեանի արուեստը մի տիեզերք է, որտեղ ամէն մի սերունդ իր համար գտնելու է նոր համաստեղութիւններ:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Երեւան